


**1.2.6. Առևտուր, այլ ծառայություններ
(սպառողական շուկա)**

2012թ. հունվար-մարտին ԼՂՀ սպառողական շուկան (ըստ տնտեսավարող սուբյեկտներից ստացված հաշվետվությունների և չհաշվառվող դաշտի լրահաշվարկի) կազմել է 22827.0 մլն դրամ՝ նախորդ տարվա հունվար-մարտի համեմատ, համադրելի գներով, աճելով 15.9 տոկոսով:

	2012թ. հունվար-մարտի փաստացի ծավալը, մլն դրամ	2012թ. հունվար-մարտը 2011թ. հունվար-մարտի նկատմամբ, համադրելի գներով, տոկոսներով	Տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ	
			2011թ. հունվար-մարտ [#]	2012թ. հունվար-մարտ
Մանրածախ ապրանքաշրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալը, ընդամենը՝ այդ բոլում՝	22827.0	115.9	100.0	100.0
մանրածախ առևտրի շրջանառությունը	19243.7	116.3	83.3	84.3
բնակչությանը մատուցված ծառայությունները	3583.3	113.7	16.7	15.7

Սպառողական շուկայում մանրածախ առևտրի շրջանառության և բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալների կառուցվածքը 2011- 2012թթ. հունվար-մարտին (տոկոսներով՝ ընդամենի նկատմամբ)




Մանրածախ առևտուր

2012թ. հունվար-մարտին մանրածախ առևտրի շրջանառությունը, ընթացիկ գներով, կազմել է 19243.7 մլն դրամ, որը 2011թ. նույն ժամանակաշրջանի համապատասխան ցուցանիշի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 16.3 տոկոսով:

Մանրածախ առևտրի շրջանառությունը 2012թ. հունվար-մարտին

	2012թ. հունվար-մարտին		Ընդամենի նկատմամբ, %
	Շրջանառությունը, ընդամենը, մլն դրամ	2011 թ. հունվար-մարտի նկատմամբ, համադրելի գներով, %	
Մանրածախ առևտուր, ընդամենը՝ այդ բոլում՝	19243.7	116.3	100.0
խանութների	14586.7	116.5	75.8
սպառողական ապրանքների շուկաների	1173.9	110.9	6.1
գյուղատնտեսական ապրանքների շուկաների	365.6	122.8	1.9
առևտրի այլ օբյեկտների	3117.5	117.0	16.2

Մանրաձախ առևտրի շրջանառությունը ըստ ձևավորման աղբյուրների, 2012թ. հունվար-մարտին




Մանրաձախ առևտրի շրջանառությունը ըստ ԼՂՀ շրջանների, 2011-2012թթ. հունվար-մարտին

	2011թ. հունվար- մարտի փաստացի ծավալը, մլն դրամ	Ընդամենի նկատմամբ, %	2012թ. հունվար- մարտի փաստացի ծավալը, մլն դրամ	Ընդամենի նկատմամբ, %
Ընդամենը	16300.8	100.0	19243.7	100.0
ք. Ստեփանակերտ	10519.7	64.5	13136.4	68.3
Ասկերան	1618.3	9.9	1444.0	7.5
Հաղրուք	676.1	4.2	803.8	4.2
Մարտակերտ	992.0	6.1	1100.3	5.7
Մարտունի	1852.5	11.4	2184.0	11.4
Շահումյան	91.4	0.6	81.9	0.4
Շուշի	234.6	1.4	215.4	1.1
Քաշաթաղ	316.2	1.9	277.9	1.4

ԼՂՀ շրջաններին բնորոշ են առևտրի շրջանառության տարբեր մակարդակներ: Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ շրջանների առևտրի շրջանառության մակարդակների տարբերությունը, հիմնականում, պայմանավորված է առևտրի օբյեկտների քանակով, բնակչության թվաքանակով, ինչպես նաև բնակչության գնողունակ պահանջարկի մակարդակի տարբերություններով և արտաքին շուկաներին կապող կոմունիկացիաների տեղաբաշխմամբ:

Առևտրի շրջանառության կառուցվածքն ըստ շրջանների, 2012թ. հունվար-մարտին



2012թ. հունվար-մարտին մեկ բնակչի հաշվով առևտրի շրջանառությունը կազմել է 132584.4 դրամ՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ, համադրելի գներով, աճելով 15.3 տոկոսով:

Մանրաձախ առևտրի շրջանառության համեմատական ակտիվությունը

	2011թ. հունվար-մարտին	2012թ. հունվար-մարտին	2012թ. հունվար-մարտը 2011թ. հունվար-մարտի նկատմամբ, համադրելի գներով, %
Ընդամենը, մլն դրամ	16300.8	19243.7	116.3
Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառության ծավալը, դրամ	113302.3	132584.4	115.3

Բնակչությանը մատուցված ծառայություններ

2012թ. հունվար-մարտին հանրապետությունում բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալը, փաստացի գներով, կազմել է 3583.3 մլն դրամ, որը 2011թ. հունվար-մարտի նկատմամբ, համադրելի գներով, աճել է 13.7 տոկոսով:

2012թ. հունվար-մարտին 2011թ. հունվար-մարտի համեմատ բնակչությանը մատուցված ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 4.5% հավելում, որը հիմնականում պայմանավորված է առողջապահության (28.7 %), տոմսերի վաճառքի (24.3%), կրթության (5.2%) և ֆինանսական գործունեության (5.0 %) ծառայությունների սակագների հավելումով:


Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալն ըստ տեսակների

	Փաստացի ծավալը, մլն դրամ		2012թ. հունվար- մարտը տոկոսով 2011թ. հունվար- մարտի նկատմամբ (համադրելի գներով)
	2011թ.# հունվար-մարտ	2012թ. հունվար-մարտ	
Ընդամենը	3276.0	3583.3	113.7
<i>այդ թվում՝</i>			
հյուրանոցներ և ռեստորաններ	223.1	247.6	108.2
տրանսպորտ	482.3	530.4	108.9
կապ	1168.0	1246.7	125.3
կոմունալ	34.6	41.6	120.2
սոցիալական	18.6	25.6	146.0
անհատական	148.3	157.0	104.6
կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգում	59.9	36.3	59.9
ֆինանսական գործունեություն	488.2	579.3	113.0
անշարժ գույքի հետ կապված գործունեություն	39.6	64.6	163.1
տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառ	3.2	5.7	178.1
կրթություն	420.6	408.9	92.4
առողջապահություն	52.5	67.8	100.3
այլ տեսակի ծառայություններ	137.1	171.8	125.3


Բերված տվյալներից երևում է, որ 2012թ. հունվար-մարտին նախորդ տարվա համապատասխան ժամանակաշրջանի համեմատ աճել են բնակչությանը մատուցված բոլոր տեսակի վճարովի ծառայությունների ծավալները, բացի կենցաղային արտադրատեսակների և անձնական օգտագործման իրերի նորոգման և կրթության ծավալներից:

2012թ. հունվար-մարտին բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների կառուցվածքում մեծ տեսակարար կշիռ են կազմել կապի (1246.7 մլն դրամ), ֆինանսական գործունեության (579.3 մլն դրամ), մարդատար տրանսպորտի (530.4 մլն դրամ) և կրթության (408.9 մլն դրամ) ծառայությունները, համապատասխանաբար՝ 34.8, 16.2, 14.8, և 11.4 տոկոս:

Բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների կառուցվածքն ըստ տեսակների 2012թ. հունվար-մարտին




Բնակչությանը մատուցված ծառայությունների տեսակների բաշխվածությունը ըստ Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ մյուս շրջանների, 2012թ. հունվար-մարտին, տոկոսներով




2012թ. հունվար-մարտին բնակչությանը մատուցված բոլոր տեսակի ծառայությունների ոլորտում առկա է ք.Ստեփանակերտի գերակայությունը, բացի անշարժ գույքի հետ կապված ծառայություններից: Ըստ ծառայությունների տեսակի շրջանների տեսակարար կշիռը տատանվել է 3.7-67.5 տոկոսի սահմաններում:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալներն ըստ Ստեփանակերտ քաղաքի և ԼՂՀ մյուս շրջանների, 2011- 2012թթ. հունվար-մարտին, տոկոսներով



2012թ. հունվար-մարտին հանրապետությունում բնակչությանը մատուցված ծառայությունների ընդհանուր ծավալի 75.3տոկոսը բաժին է ընկել ք.Ստեփանակերտին, 24.7 տոկոսը՝ մյուս շրջաններին:

Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալի կառուցվածքն ըստ ԼՂՀ շրջանների 2012թ. հունվար-մարտին



Մանրաձախ առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալի համեմատական ակտիվությունն ըստ շրջանների, 2012թ. հունվար-մարտին

	Առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը, մլն դրամ	Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալի, դրամ	Մեկ բնակչին ընկնող առևտրի շրջանառության և ծառայությունների ծավալը հանրապետության միջինի նկատմամբ, տոկոսով
Ընդամենը	22827.0	157272.5	100.0
ք. Ստեփանակերտ	15836.3	295547.1	187.9
Ասկերան	1622.5	89864.3	57.1
Հաղբուք	931.4	73669.2	46.8
Մարտակերտ	1265.6	63774.3	40.6
Մարտունի	2421.6	100979.9	64.2
Շահումյան	87.1	29696.6	18.9
Շուշի	313.9	57448.8	36.5
Քաշաթաղ	348.6	40351.9	25.7